



ՏԻԳՐԻՍԻ ՍԻՒՆԱԿՆԵՐԸ ԲԱՑ
ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՋԵՒ :



THE
DICKRIS PUBLISHING CO.
628 Third Avenue,
NEW YORK CITY.

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 3

ՆԻՒ ԵՈՐԻ, ՆՈՅ. 27 1897

ԳԻՆ 3 ՍԷՆՔ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ
Տ. ՄԵԼԻՔԻՍԵՅԻ ԱՐԲԵ-
ՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱՏԵԱՆՑ.
ԵՒ
ՓԵՐԱՊԱՏԻՒ

ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՏԵՓԱՆԷ :

Այս երեկոյ գումարուելիք Ազգ. մեծ ժողովին ուշադրութեանը կը յանձնարարենք, ինչպէս նաև ամբողջ գաղթականութեան, վերի նշանաւոր հեղեղեցականներու արդէն հանրաձայնօք լռեցանք իբր ընտրելի Միացեալ Նահանգաց Հայերուն հոգեւոր Հովուի պաշտօնին :
ԱՄԵՆ. Տ. ՄԵԼԻՔԻՍԵՅԻ ԱՐԲԵ-ՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱՏԵԱՆՑ ծնած է Ռուսաստան. մօտաւորապէս 66 տարեկան է. Հայ եկեղեցական դասին մէջ մին է այն սակաւաթիւ եկեղեցականներէն, որք համարարանական բարձր կրթութիւն առած են. ծանօթ է Գերմաներէն, Գաղղիերէն, Լատիներէն, Իտալերէն և Անգլիերէն լեզուներուն : Բոլոր ազգին ծանօթ է թէ Մուրատեանց Սրբազանը Եկեղեցական և Ազգային ամենաբարձր պաշտօնին ընտրուեցաւ, այսինքն Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան. Բայց Չարը մերժեց զայն վաւերացուենք, որով Սրբազանը կրկին փակուած օրաց Գատրօրի Ս. Թագուոր Եկեղեցիին քարոզչութեան պաշտօնին մէջ :
Մուրատեանց Սրբազանը հրատարակած է Սասունաձառնական ընտիր գիրք մը, ինչպէս նաև թարգմանած է Եւրոպական հեղինակի մը իմաստասիրական մէկ գիրքը :
Գաւառ Գիրդի Գարդղիքը պարթեւ հասակ մը ունի. ճերմկած փառաւոր մօրուք մը կը գարդարէ իւր պատկառելի դէմքը, որ ամեն կերպով մարդու վրայ կը ձգէ խորին ազդեցութիւն մը Հայ եկեղեցականի մը յատուկ :

ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՏԵՓԱՆԷ,
գրեթէ 45 տարեկան է. շատ վաղուց չէ որ ընդունած է եպիսկոպոսութեան աստիճանը : Վեհ. Հայրկիին ընկերացաւ իբր թարգման Ռուսական Արքեպիսկոպոսին : Հանրաձայնօք է իւր հրատարակած Եկեղեցական Պատմութիւնով. Հմուտ է Անգլիերէն, Ռուսերէն, Յունարեւելեան և Գերմանական լեզուներուն : Փեղրապուրկէն վերադարձին «Փափուկ պատճառներու» համարաքարուեցաւ Ռուսաստանի մէջ վանք

մը, ուրկէ վերջերս դարձած է էջմիածին : Խորէն եպիսկոպոսի հակառակորդներն իսկ կընդունին թէ Նորին Գերապատուութիւնն բարձր տաղանդով օժտեալ եկեղեցական մը ու ճարտար քարոզիչ մ'է : Իւր պատմական ու լեզուարանական խորին հմտութիւնն սքանչացում առթած են նաև օտարներուն :

Հ Ե Ռ Ա Գ Ր Ա Ղ Ո Ւ Ր Ք

Լոնտոն, Նոյ. 25.—Տէ՛՛՛՛՛՛ ՄԵ՛՛՛՛՛՛ ԼԻ՛՛՛՛՛՛ ԼՈՒՒՄԻ՛՛՛՛՛՛ ԹՂԹԱԿԻ՛՛՛՛՛՛ ԿԸ ՀԵՆՈՒՊԵ՛՛՛՛՛՛.
« Կը հաստատուի այն լուր թէ Տէրութիւնները որոշած են պաշարել Տարտանէլը, եթէ Թուրքիա մերժէ իր զորքերը Կրեմէնէն դուրս հանել, և Եւրոպական կառավարիչ մը ընդունիլ այդ կզգրին համար :
Վիեննա, Նոյ. 26.—Մերսինէն հաս հասած հեռագրերը կը ծանուցանեն թէ Աւստրիայի զորակը մեծ հանգչումով ողջունուած է Թուրք կառավարութենէն :
Սր. Բեգրապուրկ, Նոյ. 27.—Նօվօսի կը յայտարարէ թէ Արեւելքի մէջ Գերմանական ազդեցութեան դուրս հանումը միայնով յառաջ պիտի բերէ Անգլիայի, Ֆրանսայի և Ռուսիայի մէջ, իրենց շահերու պաշտպանութեան համար :
Կ. Պոլիս, Նոյ. 27.—Երկու պալատականներէ և Ալպանիացի ազնուականէ մը կազմուած յանձնախումբ մը զրկուած է Ալպանիա, սեղացիները հանդարտեցնելու համար : Վերջի կառավարիչը ստիպուեցաւ փախչիլ, խոյս տարու համար Ալպանիացիներու թշնամութենէն : Նոր շփոթութիւններէ կը վախցուի :
Սր. Բեգրապուրկ, Նոյ. 17.—Ռուսիայ պահանջած է Թուրքիայէ 77ի պատերազմին տուգանքը : Ռուսիայ գիտել կուտայ թէ քանի որ Թուրքիայ կարող է նոր ու աւելորդ սպառազինութիւններու համար ստակ ծախսել, կարող ըլլալու է նաև իր պարտքերը վճարել :
Կ. Պոլիս, Նոյ. 25.—Ռուսական դեսպանատունը երէկ երկրորդ ծանուցաւր մը զրկեց Թրքական կառավարութեան, յայտարարելով թէ նեղ օրերու մէջ Ռուսական կառավարութիւնը չը պահանջեց իւր առեւտրը, բայց քանի որ հիմայ Թուրքիայ սպառազինութեան համար անտեղի ծախսեր կ'ընէ Բուսիայ հարկ կը համարի պահանջել իւր հին առեւտրը, ինչպէս որ Աւստրիական կառավարութիւնը պահանջեց և առաւ : Դուրը պատասխանելով այս ծանուցաւրին իմացուցած է Ռուսական Գործակալին թէ,

տակաւն որոշում տրուած չէ կառավարութեան կողմէն սպառազինութեան խնդրի մասին, և միևնոյն ժամանակ Գործակալարին շնորհուած է Օսմ. Ժապաւէնի աստիճանը : Հակառակ այս հերքումին, Դուրը կը բանակցի Գերմ. Դեսպանատան պաշտօնեաներուն հետ, որ միջամտեն Դուրն և Գերմ. գործարաններու միջև : Հայթայթելու համար Թուրքիային հարկ եղած զէնքերը և ուղղամթերքը :

ՆԱՄԱԿ ՓՐՈՎԻՏԷՆՍԷՆ

Փրովիտէնա, 23 Նոյ. 1897
Անցեալ կիրակի օր Գեր. Տ. Վաղինակ Մ. Վ. Սիսակեան հոգեհանգստի պաշտօն կատարեց ի յիշատակ Խաչատուրի նահատակներուն : Երբ 300 հոգիէ բաղկացած բազմութիւն մը լեցուած էր եկեղեցին, որոնք եկած էին քաղաքէն և շրջականերէն : Ասոնց մէջ կային նաև երեք տիկիներ : Յաւարտ Պատարագին սկսաւ հոգեհանգստի պաշտօնը : Բոլոր լոյսերը վառեցին : Պատարագիչ Հայրը իւր ձայնը միախառնելով դպրոցներու դասին հետ, երգեցին հոգեհանգստեան շարականները, որոնց լուրի ձայնակցեցաւ ժողովուրդը : Աւետարանի ընթերցումէն վերջ Հայր-Սուրբը քարոզ մը խօսեցաւ բնաբան ունենալով «Պաշի ծառը» : պարզեց այդ օրուան տեղի ունեցած հոգեհանգստի խորհրդաւոր նշանակութիւնը : Թուեց արշաւախմբին քաջազորութիւնները. ցոյց տուաւ թէ ինչպէ՛ս այս քաջերը վարդանանց պէս Հայրենիքի ու կրօնքի բարձր սկզբունքներով տոգորուած, նահատակեցին իրենց կեանքը Հայրենիքի փրկութեան համար ճիշտ Տղամուտի մօտիկ, — վարդանանց պատերազմի կեղերոնավայրէն ոչ այնքան հեռու :
Ծատերու դէմքերուն վրայ կը տեսնուէր արտասուք և ժպիտ խառն, հոգեկան անհուն վշտով մը համակուած : Հայրենիքի և սիրելիներու յիշատակները արթնցած էին ամենու մտքերու խորերը. այդ վայրկեանին մարդ ինչ կրնար կարգաւ այդ յուզուած սրտերու խորը, այդ անձայր անդունդներուն մէջ... :
Հոգեհանգստի աւարտումէն վերջ մեկնեցանք, բերելով մեզ հետ այդ օրուան պատմական անցքերու բոլոր յիշատակները : Ամէն բան լաւ անցաւ, միայն ծաղկեպսակի մը պակասութիւնը աչքի դարկաւ... :
Նոյն օրը Ընդհ. Ժողով մըն ալ տեղի ունեցաւ ընդ նախադահութեամբ Տ. Վաղինակ Մ. Վարդապետի Ժողովը բացուեցաւ Ազատն Աստուած

Երգով :
Առաջին աստիճանն էր Պ. Ս. Լեւոնեան, որու նիւթն էր Խաչատուրի արշաւանքը : Դրական փաստերով ցոյց տուաւ թէ ընդհ. Եւրոպայի հասարակաց կարծիքն մեր կողմն է, հակառակ դիւանագիտութեան ցոյց տուած անտարբերութեան : Երկրորդ աստիճանն էր Պ. Տ. Վահանեան, որ իրեն նիւթ ընտրած էր «Ինչ ընենք» : բացատրեց ճշմարիտ ազգասէրի մը պարտականութիւնները. յետադարձ ակնարկ մը նետելով անցեալին վրայ. բացատրեց վերջին ազգային շարժումներու իսկական արժէքն ու կշիռը, և երբեք անց իր խօսքը ցոյց տալով թէ օտարէն յոյս սպասելու մեռնիլ է : Այդ եղանակէ ճշմարիտ ազգասիրութեան քարոզն ու նշանաբանը սկիզբէն ի վեր, Պ. ամենախօսող բուն ծափերու մէջ վերջացուց իւր խօսքը :
Ժողովը ցրուեցաւ գիշերուայ ժամը տասն ու կէսին, լի հոգեկան մխիթարութիւնով :
ՎԱՐԴԳԷՍ

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀ. ՄԵՍ ԺՈՂՈՎ
ԸՆԴ. ՆԱՍՈՒԿԱԶՈՒԹԵԱՄԲ
ԳԵՐ. Տ. ՎԱՂԻՆԱԿ Մ. Վ. ՍԻՍԱԿԵԱՆԻ
ԱՅՍ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱԸ 7.30ԻՆ
220 ԻՍԹ, 23ԴՊ ՓՈՂՈՑԻ ԵԿԵՂԵՑԻՆ :

Ազգ. Հոգաբարձութիւնը յատկապէս կը հրաւիրէ ամէն Հայ ներկայ գտնուելու այս խիստ կարևոր ժողովին
ԳԼՈՒՄԻՐ ԽՆԴԻՐՆԵՐ
1. ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԸ ՊԵՏԲԸ,
2. ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԸ ԼՐԱՆԱԼՈՒՆ՝ ԻՐԵՆՑ ՀՐԱԺԱՐԱՐԱԿԱՆԻ ՄԱՍՏՈՒՑՈՒՄԸ, ԵՒ ՆՈՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ :
Հոգաբարձութիւնս կը յայտարարէ նաև թէ Գեր. Տ. Վաղինակ Վ. Սիսակեան Ս. Պատարագ պիտի մատուցանէ վաղը ժամը Լին, սովորական եկեղեցիին մէջ : Ամէն Հայ կը ընտրուի իր խօսքը :
ԱԶԳ. ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

ՆԱՒԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ
Երէկ հասած են հետեւեալ շոգեհանգստի
ՊԵՐԹԻ ԾԻՊՐԱԼՓԱՐԷՆ,
ՍԷՅԼԸՆ ՀԱՎՐԷՆ,
ՍԻՐԹԻՍ ՀԱՎՐԷՆ,
Այսօր կապատուի
ԼԱՌՈՒՐԷՆ ՀԱՎՐԷՆ.
Վաղը Նոյ. 28ին
ՓԷՆՍԻԼՎԷՆԻՍ ՀԱՄՊՈՒՐԿԷՆ



ՇԱՐԿԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի ամէն Շաբաթ օրեր ՏԻԳՐԻՍ Հրատարակչական

Ընկերութեան կողմէն:

Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ ԲՈՒՄՔԱՆՁԱՊԵՏ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՈՒ ՔԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ

Table with 2 columns: Price (Տու), Quantity (Սէնթ). Rows: 1, 50, 75, 40.

ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ Տարեկան 10 ֆր.

Բաժանորդագիրն կանխիկ է: Համցէ՛ To the DICKRIS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City.

ՆԻՒ ԵՈՐՔ, ՆՈՅ. 27 1897.

ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԽՆԴԻՐ

Տարբեր սրենակի մը մէջ կը հրատարակենք հրատարակչական շաբաթականը...

Նախ հարկ է ըսել թէ Հոգաբարձութիւնն, իւր պաշտօնավարութեան չընդունալ...

Այն օրէ ի վեր երբ Հայ գաղթականութիւնն ստուարանալ սկսեց Ամերիկայի մէջ...

Յաւալի է տեսնել թէ տակաւին այս փոփոխ խնդիր անլուծելի կը մնայ հակառակ ընդհանուր ժողովրդի փոփոխութիւնն...

զանցութեան մէջ: Չի լացող մանուկին կաթ չեն ասար սակայն:

ՏԻԳՐԻՍ կը շնորհաւորէ Ազգային Հոգաբարձութիւնն այս խնդիր ժողովրդին առջև բերելուն համար...

Այս առթիւ ՏԻԳՐԻՍ պարտականութիւն մը կը սեպէ ներկայացնել ժողովրդին երկու ընտրելիներ՝ Ամեն. Տ. Մեղիսեղէի Արքեպիսկոպոս Մուրատեանց և Գեր. Խորէն Եպիսկոպոս Սահիանէ, որոց համառօտ կենսագրութիւնը հրատարակած ենք ՏԻԳՐԻՍԻ մէջ:

ՇՆՈՐՀԱՅԱԼՈՒԹԵԱՆ ՕՐԸ

Անցեալ Հինգշաբթի օրն ազգային ընդհանուր տօն մ'էր Միաց. Նահանգաց ժողովրդեան համար: Շնորհակալութեան օրն էր այդ: 1862է ի վեր կրկին կառավարութիւնը յատկացուցած է այս օրն շնորհակալ ըլլալու Աստուծոյ՝ իր անբաւ շնորհաց համար:

Մենք, Ամերիկայի Հայերս ալ պահեցինք այս տօնն, թէպէտև շնորհակալ ըլլալու մեծ բան մը չէինք կրնար գտնել, մանաւանդ մեր ազգային ընդհանուր կենսութիւնը մէջ, թէ՛ հոս և թէ՛ ի շարքին:

Իրաւ է որ գաղթականութեան մէջ վերջերս սկսած են փորձեր ըլլալ թմրած ու վհատած ժողովուրդը սթափեցնելու համար: Հոս և հոն կայծեր կը նկատուին ժողովրդի երբեմն զիբաւառ զգաւորներն բերնակցեցնելու համար: Տարակոյտ չկայ թէ գոհացուցիչ երեկոթներ են ասոնք, բայց ազգային ընդհանուր գլխաւորութեանց և իրաց ներկայ կացութեան քով այնչափ աննշան բաներ են որ անոնց համար մարդս կը դժկամակի շնորհակալ ըլլալ:

Հարկ չէ ըսել թէ երկրազնտիս վրայ չապրիր մի ուրիշ ազգ մերինին չափ անբաղդ. ոչ մի ժողովուրդ մեզմէ աւելի յարմարութիւն ունի ձայնակցել մեծ Բանաստեղծին ու սրանմալ ըսելով՝ «Տէր զի բազում եղեն նեղիչք իմ»: Եւ ինչպէս շնորհակալ ըլլանք:

Մեր ազգային հորիզոնին վրայ յոյսի աստղ մը չ'երևցաւ տակաւին: Եւրոպայի անկման քաղաքականութեան հետ մեր ազգային խնդիրն կը մթազնի ամէն օր: Մեր գոյութեան խնդիրն խաղալիք մ'է բարեկամ և բրիտանեայ ազգաց ձեռքին մէջ. մեր արեւն առեւտուրի մէջ իր բոլոր փոխանակութեան պարզ միջոց կը գործածուի քաղաքական շուկային վրայ անխիղճ սեղանաւորներու միջոց: Եւ ինչո՞ւ շնորհակալ ըլլանք:

Հայ գաղթականութիւնը ցիր ու ցան ի սփռուս աշխարհի, կը տընին ու կը քրտնին ուրիշ ժողովուրդներու հետ: Եւ ինչպէս շնորհակալ ըլլանք... Սակայն կայ կէտ մը որուն համար պարտաւոր ենք փութ ատլ մեր բոլոր գլխաւորութիւններն տեսնող Արքեպ Պատարարին: Հայ ազգը վերջի մի քանի տարիներուն մէջ արեւն ու վեհանքն անցաւ նորէն. ստացաւ մահացու հարուած մը իր սրտի վրայ: Աշխարհ ըսաւ «ոչ այլ ևս է» բայց, ո՛չ, կենք կայ տակաւին. վերադարձ կը շարժի. շարժումը կենք է: Պիտի դայ անշուշտ օրն, յորում պիտի բուժուին այս վէրքեր, բայց

անոնց դառնութիւնն ու յիշատակը կենդանի պիտի մնայ յաւիտեան Հայոց սրտերուն ու պատմութեան մէջ: Չունինք շատ պատճառներ շնորհակալ ըլլալու այս դառնութեանց օրերուն մէջ, բայց իբր մարդ ու քրիստոնեայ ժողովուրդ պարտաւոր ենք ծունգի գալ նրկաւորի խորանին առջև և շնորհակալ ըլլալ ազգակիցով:

«Փառք Բեզ, ո՛վ Տէր, որ մեր աղէտներն աւելի սոսկալի չեղան»:

Ի Մ Ա Ս Տ Ո Ւ Ն Խ Օ Ս Ք Ե Ր

Կեանքը կկոց մ'է: ՇԵՅՔՍՐԻՐ

Կեանքը քաղող ստուեր մ'է: Պղտիկ բաներն մեծ կը թուին փոքր մարդոց համար: ԿՕԼՏՍՄԻԹՇ

Թեթև սիրտը երկար կ'ապրի: ՇԵՅՔՍՐԻՐ

Մենք կապրինք հաճելի ըլլալու համար, բայց հաճելի ըլլալու ենք սպրեւու համար: ՃՕՆՍԸՆ

Կորուստը յիշատակը կը քաղցրացնէ: ԳՐԵՂԻՐ

Գունը գեղ չտիկ, և վստահ եղիր թէ աշխարհիս վրայէն անբազամ մ'ալ պահեսցաւ: ՔՕՐԼԱՑԼ

Հայհոյութիւնը՝ բառեր են օգային: ՊԸԼԸՐ

Պենթը երեք անգամ գետնին կանցնի կըսեն, մինչ խնայողն կը մըտածէ տակաւին, բայց գետնն անցնիլ ուղղը հարիւր խնթին ինքնուրու և ինն ջուրին հետ կերթայ:

Ուրիշ մի՛ ծաղրեր երբէք, զի ծաղրելը ազնուութեան նշան չէ: Ամեն մարդ իրեն յարմար տեղն ունի. չէնքի մը բոլոր քարերն միակերպ տաշուած չեն:

Այն որ գիտէ, և գիտէ թէ գիտէ, ընկերացիր անոր. այն որ չի գիտեր, և գիտէ թէ չի գիտեր, գիտա՛ անոր. այն որ գիտէ, և չի գիտեր թէ գիտէ, յիշեցուր անոր. այն որ չի գիտեր, և չի գիտեր թէ չի գիտեր, սորվեցուր անոր. այն որ չի գիտեր, և գիտէ թէ գիտէ, մի՛ մօտենար անոր: (Թարգմանութիւն)

Անցեալ օր սևամորթ մը ձեռքակալուած էր, երկու հնդկահաւ գողցած լինելու ամբաստանութեամբ: Երբ դատաւորին առջև բերուեցաւ, ինքզինքը արդարացեալու համար ուրացաւ ամբաստանութիւնն և զինքն ձեռքակալող պաշտօնէին համար ըսաւ:

Տէր դատաւոր, այս մարդն իւր գաւազանովը սարսափելի կերպով դանակոծեց զիս:

Դատաւորն—ինչպէ՞ս եղաւ որ չի կրցիր ինքզինքը պաշտպանել, քանի որ պաշտօնէի երկու մեծութիւնն ու զօրութիւնն ունիս:

Ինչպէ՞ս պաշտպանէի ես ինքս, Տէր դատաւոր, քանի որ հաւ մը բռնած ունէի ամէն մէկ ձեռքովս, և այդ հաւերը ինչպէս դիմադրէին գաւազանի հարուածներուն:

Դերձակը—Ամուսնացած էք: Յաճախորդը—Երկու շաբաթ է որ ամուսնացած եմ:

Դերձակը—Անանկ է նէ գաղանի գրպանի մը պէտք ունիք ձեր նոր վերակուրն մէջ, ստակի համար:

ՆԱ ԼՈՒՌ ԷՐ

«Այ չի պահեմ, քեզ կը սիրեմ ազնիւ կոյս, Պատասխանէ իմ սիրոյս»:

Ըսի իրեն «Չախջախէ իմ այս կապանք Կարճ բառով մը երկավանկ»:

Չայրացայ ես, ըսի «սիրտդ սառած է, Սէրը քո մէջ մեռած է»:

Բայց խնդրեցի գէթ լուռութիւնն խըզելով Պատասխանէ մէկ բառով:

Նա լուռ էր: Նա կը դողար երբ յուսահատ «ինչ ընեմ»

Մեկնիմ, ըսի «սիրտդ է», Եւ նայեցայ աչքերուն մէջ փնտռելու, Պատասխան մը գտնելու:

Նա լուռ էր: Իրեն փոփոխ կձեռացվրայ համարյոնք, Երբ թափեցի լարացուցներ, Վար նայեցաւ, ուր ալ ինքն չէր ծովին կը փարէին աւաղին:

Նա լուռ էր: Ի՛նքր յուսահատ ալ թող տուի իւր ձեռքեր

Սիրտս կտորած ու աւեր. Ինձ նայեցաւ. աչքին մէջ կար հուր վառած, Դէմքին վրայ վարդ փռած:

Նա լուռ էր: Սիրտս տրոփեց, աչքս արցունք լեցուցաւ, Երբ պաշտելիս ժպտեցաւ:

Գլուխն հպարտ մեղմիւ դարս ալ ուսիս: «Բառի ինչ հարկ կայ հոգիս»

Պօսեցաւ:

ՔԻՕՆՏԱՅՔԻ ՆՈՐ ՃԱՄԲԱՆ

Քիճուտայքի աշխարհածանօթ ոսկիի հանքերն երթալու համար մի կառքի ճամբայ կը շինուի այժմ նոր ընկերութեան մը կողմանէ, որոյ գլխաւորութիւնն է 500,000 սուրբ: Այս նոր ճամբան պատրաստ պիտի ըլլայ Մարտի մէկին՝ ճամբորդութեան համար: Քիճուտայք երթալու փոփոք ունեցող մեր ազգայնոց աչքը լոյս:

Երկրագործին մէկը անցեալներն իր մէկ գործաւորը կանչելով կըսէ,

—Յակոբ, գնա՛ նախաճաշը կեր, Հեռի տեղ մը գործելու պիտի երթաք: Յակոբ կէս ժամէ վերջ կը դառնայ մեկնելու պատրաստ:

—Նախաճաշը կերա՞ր տղաս: —Այո, տէր իմ:

—Ուրեմն գնա՛ կէսուրու ճաշը ալ կեր, վստահ զի մեր երթալիք տեղը լուռ է, հոն ուտելիք անկարելի է գտնել:

Յակոբը իր տիրօջ հրամանն կը կատարէ: Երբ կը վերադառնայ, իւր տէրն նոյն հարցումն ընելէ վերջ նորէն կը զրկէ զինքն որ ընթրիքն ալ ուտէ: Յակոբ կը հնազանդի, և երբ կը վերադառնայ, երկրագործն կըսէ:

—Հիմայ կառքը պատրաստ է որ մեկնինք:

—Տէր իմ, մեր սովորութիւնը ընթրիքէ վերջ պառկել քնանալ է:

ԿՏՐՈՆ ՏԻԳՐԻՍԻ,

ԹԻԻ 3

ՆԻԻ ԵՈՐԲ, ՆՈՅ. 27 '97

ԳԻՆ ՄԷԿ ՍԷՆԹ

Հ Ա Ն Ե Լ Ո Ի Կ

Անցեալներն չորս Հայ ընկերներ, մին Գարեբեղյացի, մին Սեբաստիացի, երրորդը Տիգրանակերտցի, և միւսը Մալաթիացի, ձուկ որսալու գնացին: Ասոնց պայմանն էր նոյն օրուան աշխատութեան արդիւնքը հաւասարապէս բաժնել: Մինչ երեկոյ աշխատելով, սոքա մեծ ձուկ մը որսացին որ կը կռէր 120 փափն: Չորս բնկերներն իրենց որսը չորս մասերու բաժնեցին, բայց որովհետեւ կշիռ չունէին իրենց հետ, բաժանումն չէր կրցած հաւասար ըլլալ: Ասոնք երբ քաղաք եկան, կշիռն տուին իրենց բաժնիներն և գտան որ Սեբաստիացին Մալաթիացիէն 2 փափն աւելի առած էր. Գարեբեղյացին Սեբաստիացիի առածէն 4 փափն աւելի առած էր, իսկ Տիգրանակերտցին Մալաթիացիի առածի կէսէն 28 փափն աւելի առած էր: Որչափ էր իւրաքանչիւրի առածը:

Այս հանելուկ, որ թուագիտական պարզ խնդիր մ'է, առաջին լուծողը պիտի ընդունի իր նուէր մէկ տարեկան, երկրորդը՝ վեց, ու երրորդը երեք ամսական ՏԻԳՐԻՍ: Բոլոր լուծողներուն անուններն պիտի հրատարակուին լրագրոյս մէջ:

Ման.—Մեր առաջին հանելուկը լուծողներէ ոմանք մէկ և ոմանք ոչ մի նամակագրոյմ զրկած են իրենց պատասխաններու հետ: Ասոնց պատասխանելու համար կը բաւականանանք խնդրել որ հաճին կարգալ նորէն նոյն հանելուկին պայմանն:

Ժ Ո Ղ Ո Վ Ի Դ Ե Ե Ա Ն Կ Ա Ր Ծ Ի Բ Ը
«ՏԻԳՐԻՍ» Ի ՄԱՍԻՆ

Պոսթօն, 24 նոյ. Խմբագիր ՏԻԳՐԻՍԻ,

Սրտի խորին գոհունակութեամբ ընդունեցի Ձեր պատուական ՏԻԳՐԻՍը: Ամենեւին սրամազրութիւն չունիմ Ձեր արդէն գովելի ձեռնարկին համար գովեստներու շարք մը յերբերել՝ զձեզ հպարտացնելու համար, այլ կ'սպասեմ և կը փափաքիմ որ Ձեր գործը ինքնին շուայլէ Ձեզ գովեստներ և բոլորէ Ձեր գլխին անթաւամ պատկեն:

ՏԻԳՐԻՍԻ ժրջան խմբագրութեան ստանձնած դերը շատ բարձր և պարտականութիւնը շատ ծանր է. ուստի մեզ կը մնայ մաղթել անսայթաք յաջողութիւն Ձեր ստանձնած դերին մէջ, որպէսզի պատուական ՏԻԳՐԻՍը լինելով զուտ ժողովրդային մի թերթ կարենայ ծառայել ուղղակի ժողովրդեան բարոյական և մտաւորական զարգացման:

Միայն կը մնայ ինձ յորդոր կարգալ ՏԻԳՐԻՍԻ խմբագրութեանը որ և ո՛չ մի արգելք կամ խոչընդոտ պատճառէ Ձեզ յուսահատութիւն կամ վհատումն, այլ ընդհակառակն այդօրինակ պարագաներ խթան ըլլան Ձեզ ալ աւելի եռանդեամբ յառաջ խաղա-

լու դէպի Ձեր յառաջադրեալ նպատակն:

Մաղթելով խմբագրութեանդ կար և զօրութիւն, ինչպէս նաև աննկուն և անյողջողջ յարատեւութիւն: Մնամ աղօթարար Խ Ա. Դ. Կ. ՄԱՐԳԱՐԵԱՆ Հոգ. Հովիւ Պոսթօնի և Շրջակայից

Փրովիտէնս, 23 նոյ. 1897

Խմբագիր, ՏԻԳՐԻՍԻ Ա. և Բ. ԹԻԵՐԵ Կարգացած եմ. ժողովրդի լեզուն գըտայ անոր մէջ:

Մամուլը այսօր բարոյական մեծ ուժ մ'է ազգերու պահպանման իբր հզօրագոյն միջոցը: Հայ գաղթականութիւնը պիտի գարգանայ և իր մայրենի երկրին պիտի փարի միայն մամուլի զօրաւոր ձայնովը: Վստահ եմք թէ ՏԻԳՐԻՍ այդ ուղղութեամբ պիտի քալէ:

ՏԻԳՐԻՍԻ ուղղութեան համար ժողովուրդը գովեստով կը խօսի: Թ. ՃԷԼԱԿԱՆ

Նիւ Եորք, 14 նոյ. 1897

Խմբագիր, ՏԻԳՐԻՍԻ անդրանիկ թիւը, որ կարծես թէ համանուն գետին մէկ կաթիլն էր, առի ու սիրով կարգացի հասկնալու համար թէ արդեօք ի՞նչ կամ ունի: Ըստ երևոյթին բարձր գաղափարի մը ծառայելու համար հրապարակ նետուած էք, այսինքն «ԱԶԳԱՅԻՆ ԼՐԱԳԻՐ ՄԸ ՀՐԱՏԱՐԱԿՆԸ» որ կը նշանակէ արդար ու անկեղծօրէն Ազգային իրաւունքը, ամբողջ ազգութիւնը պաշտպանել, ազգը բարոյապէս բարձրանել, ընթերցասիրութիւնը ծաւալել, ևն. ևն:

«Սկսուած գործ մը կէս եղած կը համարուի». այժմ կը մնայ միւս կէսը, այսինքն յաջողութիւնը, դա ալ կը ծանրանայ Հայ գաղթականութեան վրին: Այո՛, մենք Հայերս պարտաւոր ենք մի պատուաւոր թերթ պահել. նորա յաջողութեան համար ամէն ջանք և զոհողութիւն ընել: ԺԻՐԱՐ

Չ Ա Ն Ա Չ Ա Ն Ք

ԼՍԹԱՄՅՈՐՏ, նոյ. 24

Չարսանձագ գաւառի Բերի գիւղաքաղաքէն առնուած նամակներէ կը քաղենք թէ, վերջերս Կ. Պոլսէն մի Հայ պաշտօնեայ կը զրկուի հոն, Պողոս էֆ. անուն: Այս անձ կիջեալն Ս. Գաղանձեան Հայու մը տունն, ուր մասնաւոր սենեակ մը կը յատկացուի Հայ պաշտօնէին: Երկու օր վերջ գիշեր մը ժամը 12ի ժամանակ քանի մը թիւրքեր Պողոս էֆէնտի սենեկին պատուհանէն ներս կը մտնեն ու կը գանկոծեն զայն: Հետեւեալ օրը Պողոս էֆ. պաշտօնաւոր շերթար, ու քանի մը ոտտիկաններ կուգան փնտռել զինքը, բայց անոր արեւելուայ գլխիկը կը գտնեն: Կառավարութիւնը փոխանակ չարագործները գտնելու, Գաղանձեանի տունը խուզարկել կըսկսի, կը ձերբակալէ զայն, և ուրիշ քսան Հայ երիտասարդներ բանտը կը լեցնէ այդ պատրուակաւ: Ամէն կողմ երկիւզ կը տրեք հոն, ժողովուրդը մերկ ու քաղցած ինչ ընելիքը չի գիտեր:

Լօրէնսէն Պ. Չ. Ներկարարեան կը գրէ մեզ նոյ. 20 թուականաւ թէ ամսոյս 13ին նոյն քաղաքի Կարտին փողոցի Եպիսկոպոսական Եկեղեցւոյն մէջ Արժ. Տ. Մալթոյ Ծ. Վարդապետ

Ս. Պատարագ մատուցեր ու Հոգեհանգստի Պաշտօն կատարեր է Խանասորի մէջ նահատակու Հայ Դաշնակցականներուն ի յիշատակ: Այդ առթիւ Արժ. Հովիւն մի քարոզ խօսած է օրուան ու պարագայից յարմար: «Այդ երեկոյ, կըսէ նամակագիրն, Հայոց սեփհակն (*) ժողովարահին մէջ եղաւ մի ընդհանուր ժողով, որ բացուեցաւ ազգային երգով մը: Ժողովին ներկայ էր հոծ բազմութիւն մը հանդիսականաց: Այս առթիւ ատենախօսեցին Արժ. Մալթոյ Վարդապետ Փափագեան, Արժ. Տ. Ստեփան Բահանայ Տէր Ստեփանեան, Պատ. Կիւլեան, Տիարք Վահանեան և Պոյաճեան: Ժողովն փակուեցաւ ժամը տասնին, ու ժողովուրդը մեկնեցաւ խորին սպաւորութեան տակ: Գոհացուցիչ է տեսնել թէ այս առաջին ժողովն է իր տեսակին մէջ, որ ամենայն կանոնաւորութեամբ տեղի կուենայ:

Փրովիտէնսէն կը գրեն մեզ թէ անցեալներն Հայ մը, քանի մը տարի աշխատելէ ու 500 տօլ. դրամ աւելցնելէ վերջ, կը պատրաստուի Հայրենիք վերադառնալ. երեք ուրիշ Հայրենիք՝ զիտցած լինելով ճամբորդին մտադրութիւնն ու ունեցած դրամին քանակութիւնը, կեղծ պարտամուրհակ մը կը պատրաստեն ու կառավարութեան զիմեկով ձերբակալել կուտան ճամբորդը՝ ու ամբաստանութեամբ թէ այս վերջնոյն վրայ 500 տօլ. առնելիք ունէին և թէ նա մտադիր էր փախչիլ երկրէն իրենց պահանջն իմիասին տանելով: Կառավարութիւնը կը ձերբակալէ ճամբորդը ու անոր 500 տօլ. առնելով կը յանձնէ իր ամբաստանողաց: Մանրամասնութիւնք կը պահսին այս մասին և յուրն ինքնին վերապահութեամբ կը հրատարակենք:

Պ. Ա. Լեւոնեան կը գրէ Պոսթընէ. Տեղւոյս Բարեգործական Ընկերութիւնը, որ քանի մ'ամիսներէ ի վեր ձեռնարկած է գրադարան մը հաստատել, ձեռք բերած է ցարդ քսանէ աւելի գրքեր, և ութսուն կտորներ ալ ապսպրած է Պօլսէն: Ընկերութիւնը վերջերս 52 տղար զրկեց Հայրիկի և Բաֆֆիի գրքերէն բերել տալու համար: Հոս շարաթը երկու լսարան ունինք հիմայ, բայց Պոսթընը Հայոց լուսաւորութեան Աթենքը չենք նրկատեր բնաւ, թէև ոմանք այդպէս կը խորհին: Այս կարգի մարդիկ լաւ թող խորհին գրելէ առաջ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՄԸ

Անգործ Հայը.—Հայկական առածը կըսէ թէ ուր տեղ որ ծոռելու ըլլաս, անպատճառ կոնակիք բեռ մը կը դնեն. Բայց Ամերիկայի մէջ, մեր ծոռած կոնակներն կարցնող չկայ: Ընկերը.—Կերևի թէ մեզ պիտի բեռնաւորեն ուրիշներու վրայ: ՍՈՒՐ—ԵՐԿԱԹ

(*) Այս ժողովարահին գործածութեան իրաւունքը իւրացնելու խնդիրն Փրովիտէնսի Առաջնորդ Արժ. Տ. Վաղինակ Վարդապետի աշխատութեան արդիւնքն եղած է: Տեղւոյս Հագարաձութեան խնդրանք, նորին Արժանապատուութիւնն ընդհանուր ժողով մը գումարեց հոս այս մասին քանի մը շարաթներ առաջ, ու մէկ երեկոյի մէջ 600 տղար հանգանակեց, որուն կէսը այս ժողովարահի վարձուն յատկացուեցաւ:

Պ Ա Ն Ո Վ Ա Գ Ր Ո Ի Թ Ի Ե

Չմբան եղանակին հետ կսկսին հարուղիս, ուսման թիւք և կարգ մը թողային հիւանդութիւններ երևան գալ: Նորուեկեան ձկան իւղը անհաշտ թշնամի է վերայից եալ հիւանդութիւններուն: Շիշը 25 և 45 սէնթի կը ծախուի Հայկական դեղարանը: Փորձեցէ՛ք:

ՈՒՆԵՏՉԸՐ ՏՐԸԿ ԸՍԹՕՐ,

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԵՂԱՐԱՆ,

472 Յրդ Աջիւր, Նիւ Եորք:

Յ.Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ պատիւ ունի ծանուցանել թէ դեղագիրներ կը պատրաստէ խիստ աժան գիներով:

ՅՈՎՀԱՆՆԷՍ Գ. ԽԱՉԵՐԵԱՆ

Ժ Ա Մ Ս Գ Ո Ր Ծ

Թիւ 388 Յրդ Աջիւր, Նիւ Եորք: Կը նորոգէ, խիստ չափաւոր գըներով, պատի և գրպանի ամէն տեսակ ժամացոյցներ: Բոլոր դիմողներն գոհ պիտի մնան:

Ս. Ր Օ Ջ Է Ն Ս Ո Ի Է Կ ՎԱՃԱՌԱԿԱՆ

Դերձակի վերաբերեալ ամէն տեսակ ապրանքներ. մետաքսեայ սընդուս, ապրըշուս, թաւիչ, կոճակ և այլն, խիստ աժան գներով: Հայ դերձակներուն համար մասնաւոր զեղջ, եթէ ՏԻԳՐԻՍը ցոյց տան: 72 ՕՐՉԸՐՏ ԸՍԹՐԻՏ, ՆԻԻ ԵՈՐԲ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ

ՇԱՀՅԱԶԵԱՆ ԵՒ ՍԱՐԱՅԵԱՆ

Թիւ 239 Իսթ 27րդ Փողոց, Նիւ ԵՈՐԲ:

Պատիւ ունին ծանուցանել թէ նոյ. 22էն վերջ իրենց գներուն վրայ նոր գեղջ մը ևս պիտի ընեն, ամենահամեստ քանակներուն անգամ դիւրամատչելի ըլլալու համար: Հակառակ այս զեղջին կերակուրներուն քանակութիւնն, մաքրութիւնն և այլ ամէն ինչ նոյն պիտի պահուին: Շարաթական «պօստ», մէկ ու կէս տօլաւ. երեք ու կէս տօլաւ թիւքերէն երկուք ու կէս տօլաւի միայն:

ՃԷՅՄԸՍ ՍԱԿԸՐ

Վաճառական ամէն տեսակ ըստիր ասուեղէններու, խիստ գոհացուցիչ գներով. Հայ դերձակներ կըրնան իրենց ասուեղէնները գնել այս տունէն շատ աժան գներով: 246 Բանալ Ըսթրիթ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ

Պ. Գ Է Յ Ր Գ Ա Ղ Ո Ի Է Ս Ե Ա Ն

Թիւ 388 Երրորդ Աջիւր, Նիւ ԵՈՐԲ:

Զիւրամատչելի գներով արեւելեան մաքուր կերակուրներ:

Մ Ա Ն Բ Ա Լ Ո Ւ Բ Ք

Թողման Շիշմանան, եղբայր Ա. Մ. Շիշմանանի, իր ընտանիքով հանդերձ նիւ ետրք հասաւ անցեալ շաբթու:

Վերջի շաբթուս մէջ հասնող Հայ գաղթականաց թիւը 15ի շափ եղած է այս սողեր գրուած պահուն:

Անցեալ շաբթու երեկոյ տեղի ունեցաւ Յառաջադիմական ընկերութեան ժողովը ի ներկայութեան 70ի չափ անձանց, ընդ նախագահութեամբ Պ. Թ. Չարչապետանի: Խօսեցան Տ. Թ. Գարբիէլեան և Տ. Սըլվաճեան:

Ռուսաստանէն Տիւն. ձրձիւսեան Գասըլ Կառտըն հասաւ շաբթուս մէջ:

Պ. Նէրսէս Մեկեք, որ քանի մը տարիէ ի վեր Պրուքլինի մէջ մասվաճառութեամբ կը գործէր, իր խանութ փակեց անցեալ օր:

Պ. Արսէնեան, Գարակէօզեան եղբայր գործակատարն, որ քաղաքս էր քանի մ'օրէ ի վեր, Փրովիտէնս դընաց:

Պ. Թազուրեան Փարիզէն նամակ մը ստացած է որով իրեն կը գրուի թէ այդ տեղի Հայ ուսանողներէն մին, ծա նօթ ընտանիքի մը զաւակ, Օսմ. Գեւապանին դիմելով մահաբանական կրօնը ընդունած է: Այս տեսակ վատերը որքան շուտ հեռանան այնքան լաւ է:

Երկար ատենէ ի վեր 3-4 Մալաթիացիներու մէջ անվերջ թշնամութիւն մը կար, որուն պատճառները շատ հաւանական է ծագում առած են շատ աննշան և տղայական դէպքերէ:

Քանի մը անգամներ այս հայրենակիցները իրարու մէջ ունեցած են ազոտութեան անվերջ դէպքեր, նոյն իսկ օր մ'ալ հայկական ճաշարանի մը մէջ գաւաթներ իրարու երեսի նետելով ուզած են իրարու խօսք հասկցնել ի գուր տեղը: Բայց քանի մը օր առաջ էր որ այս կռիւները վերջացան, եթէ երբէք, եղեակական տեսարաններով: Անհամաձայն այս Հայերը գլուխին ալքօհօլի ազդեցութեան տակ, կսկսին նորէն անհաստեմ յիշողներու կեղտոտ շարք մը իրարու երեսի նետել: Երթալով կը պարպուին գաւաթները ինչպէս նաև իրենց զիտու պարտնակութեան մէկ մասը: Խօսքի կռիւը կը դառնայ աթոռներու կռիւ: Բայց հետզհետէ ճաշարանին շորս պատերը ալ նեղ գալով այս ահեղ պատերազմին, փողոցները կը նետուին աւելի հանգիստ շարժելու համար:

Բայց քաջերն են որ կուրծքի դաշտին վրայ իրական գործ կուենան: Միայն երեք Հայեր կը մնան անվախ հերոսներ զիջելու այս փողոցի կըռիւններուն մէջ:

Օհաննէս Տատայեանն է որ կը բռնէ Պետրոս Գարուսուզեանը, և ահա Օհաննէս Աւարեանն է որ անվեհերութիւնով կը մխէ զմելիի վեցեօթը հարուածներ Գարուսուզեանի մարմինն զանազան մասերուն մէջ: այսպէսով խլելով կուրծքի մէջ քաջութեան անթաւան դափնին:

Տոսմի վերջի արարուածները հարկ չէ երկարորէն ներկայացնել: ամէն բան յայտնի է, Տատայեանը միև նոյն գիշերը կը պառկի նեղ ծակի մը մէջ, որուն համար նեղ եկած էին Հայ ճաշարանները:

Աւարեանը թէպէտև կը փախչի, սակայն միայն երեք օրուայ համար Ոստիկանութիւնը կը գտնէ զայն և կը յատկացնէ իրեն համար աւելի յարմար տեղ մը:

Փաստարան Պ. Գ. Մինասեանի ճարտարութիւնով 35 տօլարի ծախքով Տատայեանը Չորեքշաբթի ազատ արձակուեցաւ, իբրև թէ ինքը պաշտ-

պանութեան համար բռնած էր վիրաւորեալը և ոչ թէ ուրիշ մտքով: Տեղիս Մալաթիացիներն իրենց մէջ հանգանակութիւնով մը պիտի հոգան ծախքերը: Գարուսուզեան բանտը կը սպասէ: ասոր ալ դատը մօտեցաւ կը տեսնուի:

ՆԱՄԱԿ ԿԻՊՐՈՍԷՆ

Նիկոսիա, Նոյ. 2 1897
Ժամանակիս նիւթամուլ հոգին շահու առանցքին վրայ միայն կը դառնայ: Անձանօթ են քրիստոնէական կարեկցութիւն, ընկերային պարտիք ու մարդասիրութիւնը, չեմ ուրանար սակայն բացառութիւնները, որք ընկերային աշխարհի մէջ ովախներ և էթ կրնան նկատուիլ:

Հայ երիտասարդութիւն, այն ազգայնութեան կայտառ և դեռածիլ տարրը, իր Հայրենիքը լքած, կը մաշի հիւսիսով խորթ երկիրներու մէջ, և անգորով ազգաբնակչութեանց միջև գառապարտ, կը հեղու իր թրտիք անբեր հողերու ու լեռն ապառաժներու վրայ: Կը փորէ ու կը կըրէ լեռտանջ՝ օտարին համար պաշտօններ շինելու և կառուցանելու համար, իր ստացած վարձի գինը հազիւ նօթի ստամոքսին անուեղ կը մատակարարէ:

Բնիկ Հայը կը խորշի ինչպէս ամէնուրեք, նաև հոս, իր համարին եղբորմէն: Խոյս կուտայ երբ նորա մշտաթոքամ ճակատի վրայ գաղթական բառը կարգայ, և սակայն քսակը իր գրպանին խորքը իջեցնելով անտարբեր կը լռէ անոր աղիտորմ թախանձանքը՝ կրանիտէ արձանի մը նման, և որ աւելի ցաւալին է թըռուառութիւնը գաղթական Հայուն համար ճակատագրային պատուհաս մը համարելով՝ կարճամարհէ հեզորէն, զի նա անգիտակ է վշտակութեան ու կայրի հարուածներուն:

Կարգա՛, ընթերցող, պահ մը եղբէնեան դարու եղբրական նկարագրի, բողբոջէ և տես թէ ինչ մեծ տարբերութիւն կայ այն ժամանակի Հայուն, կղերին և Հայուհոյն և արդիներուն մէջընդ, և ըսէ թէ կարելի է լուսագոյն ապագայ մը սկիզբալը:

Թ. Պ. ՉԱՎՉԱՎԱՌՃԵԱՆ

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Նիւ ետրք, Նոյ. 22
Սմբազիր,

Հաստաւածն զոր հրատարակած էք ձեր վերջի թուում նկատմամբ Յովհաննէս Անտոնեան անուն անձի մը ընդդէմ Տ. Տիրատուրեանի, կըրնայ թերևս ընթերցողաց առթել որ խալ հասկացողութիւն իրողութեանց մասին: Ուստի յուսամ ինձ կը շընորհէք մի անկիւն ձեր յաջորդ թըում, որպէս զի ուղղուի եթէ մէկը սխալ տպաւորութիւն առած է:

Իբր տարի ու կէս առաջ Անտոնեան զատաստանի մէջ կուրանայ թէ ինքն 1895 Սեպտ. 20ին փոխ առաւ 20 տօլար Տիրատուրեանէ, և ասոր տուաւ մի խոտամիզիր, իր գրով գրուած, և կուրանայ թէ խոտամիզիրն, որ հոն ներկայացուցաւ իրեն, իւրն էր կամ իր ստորագրութիւնն կը կրէր: Տիրատուրեանն զխանալով թէ այս սուտ էր, ձերբակալել տըուաւ զնա: Տիրատուրեանն ներկայացուց իր ապացոյցներ երբ Անտոնեանի նախնական քննութիւնն կատարուեցաւ, սակայն և այնպէս այս անձը թողուեցաւ, մենք գիտենք ինչ միջոցաւ:

Յետոյ Անտոնեան, պատճառելով

թէ յանիրաւի ձերբակալուած էր, տուգանքի դատ բացաւ Տիրատուրեանի դէմ: Այս դատն տեսնուեցաւ այս նահանգի Գերագոյն դատարանում, որ է Պրուքլին, ամսոյս 11ին: Դատարարի հրահանգաց (Չարճ) համեմատ, եթէ խոտամիզիրն Անտոնեանին էր, Անտոնեան կըրմիտը թուութեան (փըրճըրի) ոճիրն գործած էր՝ զայն ուրանալով, և Տիրատուրեան իրաւունք ունէր զնա ձերբակալել տալ: Երդուեալներն (ճիւրի) վճիռ տուին թէ խոտամիզիրը Անտոնեանինն է, և թէ Տիրատուրեան իրաւունք ունէր զնա ձերբակալել տալ իբր երդմիտը: Ուստի վըճիռն արուեցաւ ի նպատակ Տիրատուրեանի և ընդդէմ Անտոնեանի:

Ս. Գ. ԳԷՊԱՊԵԱՆ
Փոխանորդ Տիրատուրեանի.

ՀԱՅԿԱՍՏԱՆ ԺԱՇՆՐԱՆ

27 ՆԻԼԱՆՏ ՍԹ. ՊՕՍԹՕՆ, ՄԱՍ.

Այս ճաշարանին մէջ կը պատրաստուին Արևիկան ամենամաքուր ու համեղ կերակուրներ. մեր գիները խիտ համեստ են. ճաշարանին Տիփօններուն ալ մօտ է. ՊՕՍԹՕՆ այցելող հայրենակիցներ շատ գոհ պիտի մնան:

ԱՐԵՎԵԼԵԱՆ ԺԱՇՆՐԱՆ

Որովհետև մեր ճաշարանի կերակուրները յատուկ խնամով կը պատրաստուին. մեր քով Պօրաք երկու Տօլար է. երեք ու կէս Տօլ. թիքէթը երեք Տօլար:

Նախաճաշ— 2 հաւկիթ, սուրճ, և կարագ:

Օրական 3 պնակ կերակուր:


ՅՈՐԴԱՆԱՆ, 154 Իսթ 27րդ փողոց:

ՄԵՐ ՆՈՒՆԻՆԵՐՆ

Հետեւեալներն աննշան մաս մ'են այն բազմատեսակ ապրանքաց զորս ունինք մեր տրամադրութեան տակ իբր նուէր տալու համար մեր կտրոններու փոխարէն: Ասոնց բոլորի ցուցակը անկարելի է հրատարակել Տիփօնի մէջ՝ տեղւոյ անձկութեան պատճառաւ: Այս մասին զաղափար մը տալու համար կը բաւականանանք ըսել թէ այդ ապրանքաց կատարել ջանկը 126 երեսներէ բաղկացեալ տետրակ մ'է, որոյ մէջ ոչ միայն գիներն կան, այլ ամէն իրերու պատկերներն և բացատրութիւնները գրուած են անգլիերէն լեզուով: Այս տետրակներ կը ղրկենք փոխադրողաց օ սէնթ նամակագրող մի փոխարէն:

Մեր ամէն տեսակ ապրանքներէն կը ղրկենք նաև ամէն անոնց որք կտրոն չ'ունենալով՝ դրամ կամ նամակագրող մ' կը ղրկենք արժէքին փոխարէն: Փոխադրութեան ծախքը գնողներու մուն վրայ է:

ԱՄԵՐԻԿԱՆ ԺԱՄԱՑՈՅՑ




1 ՏՈՒԱՐ ՄԻԱՅՆ

ՄԵՐ ՆՈՒՆԻՆԵՐՈՒ ՄԷՁ

Արանց և տիկնանց համար յատուկ զմելիներ, մատանիներ, զանազան կոճակներ ևն. բազմատեսակ են:

Այս զմելիներու հատը միայն



ԿԱՐԹԷ 24 ՍԷՆՅՈՒ


ԱՅՍ ԿԱՆԱՆՑ ԱՍԵՂՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ



պէտք չէ բացատրութիւն: Կանայք գիտեն անոնց կարեորութիւնն:

ՄԵՆԻ ԽԱՂԱՂԱՍԷՐ ԺՈՂՈՎԱՐԸ

Վարդ Լեք. և ատրճանակի պէտքը քիչ անգամ կը զգանք: Պէտք է հատ մ'ունենալ սակայն, զի անոր պէտքը կենաց և մահու խնդիր է երբեմն: Աժան տեսակներ ունինք,



ԲԱՅՑ ՍԱ ԿԱՐԹԷ 1 ՏՈՒ 75 ՍԹ

ՄԵՐ ԿՏՐԱՆՆԵՐԸ

Տիփօնի շայ գաղթականութեան մէջ տարածելու համար վարչութիւնն որոշած է կտրոն մը հրատարակել թերթիս երրորդ երեսին վրայ 2 սէնթի արժողութեամբ, և իբր դրամ ընդունիլ զայն՝ փոխարէնն ի ստորեւ ծանուցուած ապրանքներէն նուէր տալու պայմանաւ, իրենց որոշեալ գներով: Այս կտրոններու գինն քանի մը շաբաթէն մտադիր ենք 1 սէնթի իջեցունել: Անոնք որ կուզեն օգտուիլ այս բացատրիկ առիթէն, աշխատելու են ձեռք ձգել Տիփօնի այս կտրոններէն որչափ որ կարելի է, ու պահել զանոնք: Ամէն 10 կտրոնի հետ 2 հատ 2 սէնթնոց նամակագրող ղրկուելու է մեզ ապրանք փոխադրութեան ծախուց համար:

ԱՁԴ

Պատու ունինք ծանուցանել թէ Տիփօնի տպարանին մէջ կը տպուի, ծանուցուեանք, այցետոմս, տետրակներ և այլ ամէն տեսակ գործեր. գոհացուցիչ գներով: Մեր տպարանին մէջ տպուած ազգային և կրօնական հրատարակները կարտատակներ նաև Տիփօնի մէջ առանց աւելորդ ծախքի: